Focus Group Survey Analysis
Faculty of Mathematics and Mechanics
MA Study Programme “Algebra and Geometry”
Participation – 5 Master's Students

Initial Ideas and Information about the Study Programme

Հարցմանը մասնակցած մեկ ուսանող բակալվրիատը ավարտել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում: Ուսանողների մոտ մասնագիտության ընտրությունը պայմանավորված է եղել դպրոցում մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից և համապատասխան օլիմպիադաներից ունեցած հաջողություններով: Մագիստրոսական ծրագիրը ընտրել են բարձր կուրսերի ուսանողների և դասախոսների՝ մասնավորապես մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ ունացած զրույցներից ուղղորդվելով: Մագիստրոսական ծրագրի մասին ունեցած պատկերացումները ուսանողների մոտ մինչև ընդունվելը և ընդունվելուց հետո չեն փոխվել, քանի որ բարձր կուրսեցիներից արդեն տեղեկացված էին, թե ինչ են սովորելու:

Students' Satisfaction with the Study Programme

Որպես կրթական ծրագրի առավելություններ ուսանողները նշում են, որ նրանք հնարավորություն ունեն ոլորտի լավագույն մասնագետների՝ գիտությունների ազգային ակադեմիայի և արտասահմանից հրավիրված մասնագետների դասընթացներին ներկա գտնվելու՝ *«ստեղ սովորելուց տպավորություն չի լինում, որ ինչ-որ լավ մասնագետ կա, որ իրան չգիտես, կամ տենց կապվելու միջոց չունես Հայաստանում. ու տենց ափսոս զգաս, որ իրա դասերին չես նստում»*, ինչպես նաև նշում են, որ հնարավորություն ունեն աշխատաշուկայի մասնագետների հետ հաղորդակցվելու: Առավելությունների շարքում ուսանողները թվարկեցին նաև, որ դասախոսները իրենց ներգրավում են միջազգային և տեղական գիտաժողովներին մասնակցություն ունենալու:

Որպես կրթական ծրագրի թերություն ուսանողները նշում են գրավոր քննությունները՝ դրանք ուսանողների կարծիքով ավելի շատ ստուգում են հիշողությունը, քան թե առարկայի խնդիրներին տիրապետելու ցուցանիշները՝ *«մեր մասնագիտությունը նենց ա, որ թեորեմի ապացույցը անգիր հիշելը պրակտիկ չի էլի»:* Ուսանողները թերություն են համարում նաև իրենց առաջարկվող գրականության սովետական կամ ռուսական լինելու փաստը՝ *«պետք ա տեղյակ լինես՝ ինչ արդի խնդիրներ կան, որովհետև ինչ-որ առարկաներ կան, որ մի տարի, կամ երկու տարի մարդիկ անցում են ու տպավորություն ա, որ էդ առարկան արդեն սահմանափակվում ա էդքանով»*, ուսանողները նշում են, որ կցանկանային ծանոթանալ նաև տվյալ առարկային վերաբերվող արդի խնդիրներին:

Մասնագիտական կայացման հարցին անդրադառնալուց ուսանողները նշեցին, որ հայաստանյան մասնագետների մեծամասնությունը *«...անցնում են նույն ուղով...»* ինչ իրենք, այդպիսով Հայաստանում մասնագետ դառնալու համար մագիստրոսական ծրագիրը իրենց լիովին բանվարարում է, այնուամենայնիվ ուսանողները նշեցին նաև որ կան զգալի տարբերություններ հայաստանյան և արտասահմանյան մասնագետների միջև, ինչ մասին իրենք չէին իմանա, եթե հրավիրված դասախոս չունենային՝ *«հարցը են ա, որ ստեղ ավարտելով, էս գծով սովորես՝ մանագետ կդառնաս Հայաստանում, կամ, կարող ա, Ռուսաստանում, բայց եթե ուզում ես դառնաս նենց մասնագետ, որ աշխարհի մասշտաբով ա՝ Ամերկայում օրինակ մրցունակ լինես՝ էտի կարող ա արդեն ուրիշ բաներ պաանջի, որը մենք ստեղ սովորելով չենք կարա իմանանք»*: Որպես մասնագիտական կայացման համար անհրաժեշտ հմտություն՝ ուսանողները նաև առաջարկեցին ուսումնական ծրագրում ներառել LaTex համակարգչային ծրագրի դասընթաց:

Individual Work/Self Study

Ուսանողները անհատապես հետաքրքրված են իրենց մագիստրոսական թեզերի կատարմամբ՝ *«կոնկրետ մեր ուղղվածությամբ պարտադիր ա ոչ թե լավ ա թեզ գրելը»*: Թեմաների ընտրությունը կատարում են գիտական ղեկավարի հետ միասին և նրա ուղղորդմամբ: Ժամկետների պահպանման խնդիր չունեն, սակայն դժգոհում են մագիստրոսական թեզի համար նախատեսված ֆիքսված ծավալից, ասելով, որ դա իրենց ոլորտի համար արդյունավետ չէ՝ *«եթե նորարարություն ինչ-որ ունեցել ես, էդ ամենաշատը 2-3 էջ ա լինելու», «մագիստրոսական թեզը պետք ա 20 էջ լինի ամենաքիչը, էտի արդեն բերում ա նրան, որ դու էդ բուն ուղղվածությունը նյութի պետք ա կցես ավելորդ մասեր»*: Գիտական ղեկավարների հետ հաղորդակցումը ուսանողները արդյունավետ են համարում, քանի որ նրանցից կարողանում են ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները և անհրաժեշտ մասնագիտական գրականությունը՝ *«...գրականություն գտնելը մնում ա ղեկավարների վրա, որտև ղեկավարները էս ոլորտում ավելի շատ են աշխատել, գիտեն, որ դեպքում, որտեղ ավելի լավ ա գրած...»*:

Ընթացիկ ինքնուրույն աշխատանքների մասին հարցին ուսանողները պատասխանեցին, որ ունեցել են այնպիսի առարկա, որի ընթացիկ քննությունները ստացել են ինքնուրույն աշխատանքներ ներկայացնելու միջոցով՝ այդ տարբերակը ուսանողները գրավոր միջանկյալ քննությունից առավել արդյունավետ են համարում:

Ուսանողները չեն բացառում պլագիարիզմի և գնված աշխատանքներ ներկայացնելու հնարավորությունը ոչ մասնագիտական առարկաներից հանձնարարվող ռեֆերատների և ցածր կուրսերում կատարվող կուրսային աշխատանքների դեպքում՝ *«հարցը են ա, որ եթե կաշառակերության տեսանկյունից նայենք, ոնց-որ նույն հաջողությամբ եթե ուսանողը կարար ուրիշ տեղից վերցներ՝ փող տար, որ իրանք գրեյին, կարա նույն ձև իրա ղեկավարին փող տա. եթե ղեկավարը համաձայն ա տենց ձևով էդ ընդունել»,* սակայն բացառում են այդ հնարավորությունը

մագիստրոսական թեզի կամ դիպլոմային աշխատանքի պարագայում՝ *«տենց բան չի ընում էլի, համենայն դեպս էդ ընդհանուր հանձնաժողովում ներկայացնելուց հետո երևում ա՝ ուսանողը էդքան աշխատանք արել ա, որ էտի կարա պահի, թե առել ա, կամ իրա ղեկավարն ա արել»*:

Professional Work-Placement/Practice

Նշված մասնագիտությամբ ուսանողները մասնագիտական պրակտիկա չեն անցնում, սակայն ուսանողները հանդես եկան պրակտիկայի կազմակերպման մի քանի առաջարկներով՝ մասնագիտական գիտաժողովներին մասնակցություն և հնարավորության դեպքում զեկույցների ներկայացում, ամառային դպրոցների կազմակերպում և՝ *«բակալավրում մենք գնացինք դպրոցում դաս տվինք, մագիստրոսում էլ գանք բակալավրում դաս տանք»* ՝գործնական կամ լաբորատոր:

Teaching Staff and Teaching Methods

Դասախոսների մասին խոսելուց ուսանողները նշեցին, որ կարևոր են նրանց ոչ միայն մասնագիտական, այլ նաև մանկավարժական և մարդկային որակները: Ուսանողները հայտնում են, որ որոշ դասախոսներ կոնֆլիկտային են, ոմանք կարող են լսարանում ծխել, ոմանց համար սովորական երևույթ է քննությունից ուշանալը, մինչև անգամ ուսանողները չեն բացառում նաև, որ դասախոսը կարող է ֆիզիկական ուժ կիրառել իրենց նկատմամբ՝ *«...որ դասախոսից ինչ-որ բան ուզես կարող ա ջղայնանա, ծեծի քեզ լսարանում...»*: Նման երևույթներից խուսափելու համար ուսանողները առաջարկում են դասախոսներին գնահատելու սոց. հարցումները փոխարինել առարկան դասավանդող դասախոսին ընտրելու հնարավորությամբ՝ *«դասախոսին ընտրենք՝ այսինքն եթե էդ առարկան կարա 3 դասախոս տա՝ ուսանողը ընտրության հնարավորություն ունենա, թե ով ա ուզում իրան դաս տա»*: Նշվեց նաև, որ որոշ դասախոսներ կարող են նկատողություն անել ուսանողի արտաքին տեսքին՝ կապված հագուստի, սափրվելու և այլնի հետ՝ *«քննությանը թրաշված չի գալիս ուրեմն քեզ չի հարգում, չպտի իրան 20 դնես էլի...»:* Բացի վերը նշվածից ուսանողները ասացին նաև, որ որոշ դասախոսներ կարող են սուբյեկտիվություն ցուցաբերել ուսանողներին գնահատելու մեջ, ինչը կանխարգելելու նպատակով՝ բանավոր քննությունների ընթացքում գնահատման օբյեկտիվությունը պահպանելու համար ուսանողները առաջարկում են քննական ստուգումները անցկացնել մի քանի մասնագետների և ամբիոնի վարիչի ներկայությամբ:

Opinion on Yerevan State University (YSU)

Ուսանողները նշում են, որ ԵՊՀ-ում՝ մասնավորապես իրենց ֆակուլտետում սովորելը զարգացնում է տրամաբանությունը և վերլուծական մտածողությունը:

Ուսանողներին չի բավարարում գրադարանի համալրվածությունը՝ նրանք առաջարկում են ավելացնել ոլորտում հրատարակվող նոր պարբերականների, գրքերի և ամսագրերի համալրվածությունը: Ինչպես նաև, ուսանողները կցանկային,

որ համալսարանը ապահովեր միջազգային էլեկտրոնային ամսագրերի հասանելիությունը, քանի որ դրանցից շատերը տրամադրվում են վճարովի հիմունքներով և ուսանողների համար հասանելի չեն: